

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ՝

Կ. Ավագյան	ՀՀ ԱԺ-ի պատգամավոր
Հ. Հակոբյան	ՀՀ սփյուռքի նախարար
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ա. Քարամյան	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ
Ա. Բերբերյան	ՀՀ Նախագահի օգնական
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ

Հրավիրվածներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Մ. Հակոբյան	ՀՀ վարչապետի օգնական
Ս. Սարգսյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի խորհրդական
Ա. Տեր-Հովակիմյան	Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ս. Աբրահամյան	«Առողիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ-ի առողիտոր
Գ. Ամիրխանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

1. Հիմնադրամի 2011 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացության ներկայացում

(Ս. Աբրահամյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց «Աուդիտ Սըփորթ Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտոր Ս. Աբրահամյանը և նշեց, որ իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ առ 2011 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Արդյունքում ներկայացվել է դրական եզրակացություն՝ որոշակի վերապահումներով: Դրանից բացի՝ ներկայացվել են մի շարք առաջարկություններ՝ բացահայտված և արձանագրված թերությունների վերացման վերաբերյալ: Դրանցից են՝

1) գույքագրման գործընթացում աուդիտորական ընկերության ներկայացուցչի մասնակցության բացակայությունը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ գույքագրումն իրականացվել էր նախքան աուդիտը: Դրանից բացի՝ գույքագրման գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների շեղումներով (ակտերը չեն ստորագրվել գույքագրման հանձնաժողովի անդամների կողմից և չեն կազմվել վերջնական ամփոփ հաշվետվություններ):

2) Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի հյուրանոցային համալիրում վարել առանձնացված հաշվապահական հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններով, որը կոփտարկվի որպես առանձին հաշվառում:

3) գնումների կատարման ներքին կանոնակարգի մշակման առաջարկությունը, որը վերաբերում է նյութական արժեքների ձեռքբերմանը:

4) ԱԱՀ-ի գումարների հաշվանցման հարցը, որի կապակցությամբ նա տեղեկացրեց, որ 2010 թվականին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացել են պաշտոնական պարզաբանում, ըստ որի հիմնադրամի ծրագրային մասը չի դիտարկվում ընդհանուր շրջանառության մեջ, ուստի և Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի տարեկան ընդհանուր շրջանառությունը կազմել է շուրջ 47.0 մլն դրամ, որի մեծամասնությունը բաժին է ընկել ներքին շրջանառությանը:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ աուդիտորական ընկերության կողմից ներկայացված առաջարկություններից՝

- 1) 6-ն ընդունվել և կատարվել է:

2) 12-ը դեռևս գտնվում են կատարման ընթացքի մեջ, որոնց մասով մշակվել է համապատասխան ժամանակացույց.

3) 4-ը չի ընդունվել՝ սկզբունքային անհամաձայնությունների պատճառով: Դրանք են՝

ա. անմիջականորեն հյուրանոցային համալիրում հաշվապահական հաշվառում իրականացնելը, որն առավել նպատակահարմար է հաշվառումը վարել Երևանի Տերյան 74 հասցեում գտնվող գրասենյակում (իրավաբանական գրանցման հասցեում), քանի որ հյուրանոցային համալիրը գտնվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կազմում,

բ. հաստիքացուցակի վերանայման վերաբերյալ առաջարկությունը չի ընդունվել, քանի որ միևնույն անձի կողմից 2-րդ հաստիքով նախատեսված աշխատանքները վարձատրվում են հաստիքի 50 տոկոսի չափով, և բացի դրանից, առկա են նաև սեզոնային աշխատանքների դեպքեր (օրինակ՝ պահակի և կաթսայատան պատասխանատվի հաստիքների համատեղությունը):

ՀՀ Աժ-ի պատգամավոր Կ. Ավագյանը նշեց, որ՝

1) Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի հյուրանոցային համալիրում առանձնացված հաշվապահական հաշվառում վարելու վերաբերյալ ներկայացված առաջարկությունն ընդհանուր առմամբ ընդունելի է.

2) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակի վերանայման մասով նպատակահարմար չէ պայմանագրային կամ սեզոնային աշխատանքների մասով սահմանել տարեկան վճարվող աշխատավարձ.

3) գնումների կատարման ներքին կանոնակարգի մշակման և գնումների ընթացակարգերի կիրառությունն ընդունելի է, իսկ ծրագրային մասով այն հնարավոր չէ իրականացնել, քանի որ ծառայությունների մատուցման ձեռքբերումն իրականացվում է ուսանողական խորհուրդների կողմից՝ համաձայն համապատասխան համաձայնագրերի:

ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանը նշեց, որ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ծախսային հատվածում գույքային ձեռքբերումները կազմում են ընդամենը 3 տոկոս, իսկ մնացածը վերաբերում են ծրագրերի, դրամաշնորհների շրջանակներում ձեռք բերվող ծառայություններին, որոնք հնարավոր չէ իրականացնել գնումների ընթացակարգերին համապատասխան, քանի որ առաջարկ ներկայացնողները միայն ուսանողական խորհուրդներն են:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ անհրաժեշտ է ընդունել աուդիտորական ընկերության ներկայացրած՝

1) անմիջականորեն Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի հյուրանոցային համալիրում հաշվապահական հաշվառում վարելու վերաբերյալ առաջարկը.

2) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակի վերանայման վերաբերյալ առաջարկությունը և աշխատողին միաժամանակ երկու հաստիքի համար աշխատանքի ընդունելու փոխարեն միացնել միևնույն անձի զբաղեցրած հաստիքները՝ համապատասխանաբար ավելացնելով նոր հաստիքի համար սահմանվող աշխատավարձի չափը: Այդ կապակցությամբ առաջարկեց վերանայել հաստիքացուցակը, պաշտոնների անձնագրերը, սահմանվող աշխատավարձերի չափերը՝ հաշվի առնելով կատարվող աշխատանքների սեզոնայնությունը կամ այլ առանձնահատկություններ.

3) գնումների կատարման ներքին կանոնակարգի մշակման առաջարկությունը, և, նշանակելով գնումների համակարգող, գնումներն իրականացնել սահմանված ընթացակարգերով: Ինչ վերաբերում է ծրագրերի, դրամաշնորհների շրջանակներում ուսանողական խորհուրդներից ձեռք բերվող ծառայություններին, ապա դրանք կկարգավորվեն համապատասխան համաձայնագրերով և գնումների ընթացակարգերը չեն տարածվի վերջիններիս վրա.

4) ԱԱՀ-ի գումարների հաշվանցման առաջարկությունը և հաշվանցել հյուրանոցային համալիրում ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ժամանակ հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները՝ հիմնադրամի կողմից մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից: Դրանից բացի՝ հարցը պետք է քննարկվի ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչների հետ, քանի որ հիմնադրամի տարեկան շրջանառությունը գերազանցում է 58.3 մլն դրամի շեմը և համարվում է ԱԱՀ վճարող սուբյեկտ:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2011 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կազմակերպության ներկայացրած եզրակացությունը.

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝

ա. ձեռնարկել միջոցներ՝ սեղմ ժամկետներում աուդիտորական ընկերության կողմից բացահայտված թերությունների վերացման, ինչպես նաև հետագա տարիներին նմանօրինակ թերացումների բացառման ուղղությամբ,

բ. ընդունել աուդիտորական ընկերության ներկայացրած առաջարկությունը և անմիջականորեն Ծաղկաձորի երիտասարդական կենտրոնի հյուրանոցային համալիրում վարել առանձնացված հաշվապահական հաշվառում՝ համապատասխան գրանցամատյաններով և յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար կազմել ամփոփ հաշվետվություններ,

գ. ընդունել աուդիտորական ընկերության ներկայացրած առաջարկությունը և վերանայել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաստիքացուցակը, պաշտոնների անձնագրերը, սահմանվող աշխատավարձերի չափերը՝ հաշվի առնելով կատարվող աշխատանքների սեզոնայնությունը կամ այլ առանձնահատկություններ,

դ. ընդունել աուդիտորական ընկերության ներկայացրած առաջարկությունը և մշակել գնումների կատարման ներքին կանոնակարգ, նշանակել գնումների համակարգող և գնումներն իրականացնել սահմանված ընթացակարգերով: Ինչ վերաբերում է ծրագրերի, դրամաշնորհների շրջանակներում ուսանողական խորհուրդներից ձեռք բերվող ծառայություններին, ապա համապատասխան համաձայնագրերի առկայության պարագայում առաջնորդվել դրանցով, որոնց պարագայում գնումների ընթացակարգերը չեն տարածվի վերջիններիս վրա:

2. Հիմնադրամի 2011 թվականի տարեկան հաշվետվության հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ 2011 թվականի ընթացքում՝

1) իրականացվել է 143 ծրագիր՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ.

2) բուհ-երի կողմից իրականացվել է 51 ծրագիր, հասարակական հատվածի կողմից՝ 26 ծրագիր.

3) Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հաստատած ծրագիրն ամբողջությամբ կատարվել է:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2011 թվականի տարեկան հաշվետվությունը:

3. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 3-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ առաջարկվում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կանոնադրության մեջ կատարել հետևյալ 3 փոփոխությունները՝

1) 1.5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.5. Հիմնադրամի շահառուներն են երիտասարդները, բազմաբնույթ երիտասարդական կազմակերպությունները, հիմնադրամի հիմնադիրը, ինչպես նաև հիմնադրամին օգնություն ցուցաբերող անձինք».

2) 4.3.1-ին կետում «ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ» բառերը փոխարինել «ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավար» բառերով.

3) 4.3.2-րդ կետում «ՀՀ Նախագահի խորհրդականի օգնական» բառերը փոխարինել «ՀՀ Նախագահի օգնական» բառերով:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Ա. Քարամյանը նշեց, որ հիմնադրամի հիմնադիրը չի կարող հանդիսանալ հիմնադրամի շահառու, ուստի առաջարկեց հանել «հիմնադրամի հիմնադիրը» բառերը, իսկ «բազմաբնույթ երիտասարդական կազմակերպությունները, հիմնադրամի հիմնադիրը» բառերը փոխարինել «երիտասարդական, ուսանողական խնդիրներով զբաղվող կազմակերպությունները» բառերով:

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն առաջարկեց՝ հստակեցնել 1.5-րդ կետը, ըստ որի հիմնադրամի շահառու կհամարվեն երիտասարդները և երիտասարդական կազմակերպությունները:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններին.

2) հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝ հստակեցնել 1.5-րդ կետը, ըստ որի հիմնադրամի շահառու կհամարվեն երիտասարդները և երիտասարդական կազմակերպությունները:

4. Հիմնադրամի հաստիքացուցակում կատարված փոփոխությունների ներկայացում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 4-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանն առաջարկեց գնումների մասով վարձել մասնագիտացված կառույց:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝

1) հաստիքացուցակի փոփոխություններում ներառել նաև աուդիտարական ընկերության կողմից ներկայացված առաջարկը, ինչպես նաև հաշվի առնել ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանի առաջարկը.

2) հաջորդ նիստին ներկայացնել վերջնական փոփոխված հաստիքացուցակը:

5. Հիմնադրամի կառուցվածքային փոփոխությունների ներկայացում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 5-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տեր-տերյանն առաջարկեց հիմնադրամի կառուցվածքային սխեման համապատասխանեցնել հաստիքացուցակին՝ հաշվի առնելով հաստիքացուցակում կատարվելիք փոփոխությունները:

ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանն առաջարկեց որպեսզի կառուցվածքային սխեմայում կոնկրետ հաստիքների փոխարեն արտացոլվեն ստորաբաժանումները:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝

1) ՀՀ սփյուռքի նախարար Հ. Հակոբյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի առաջարկություններին համապատասխան՝ վերանայել հիմնադրամի կառուցվածքային սխեման՝ հաշվի առնելով հաստիքացուցակում կատարվելիք փոփոխությունները.

2) հաջորդ նիստին ներկայացնել վերջնական փոփոխված կառուցվածքային սխեման:

6. Հիմնադրամի 2012 թվականի բյուջեի հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 6-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը և նշեց, որ, ի տարբերություն 2011 թվականի բյուջեի ծախսային մասի, 2012 թվականի բյուջեի ծախսերում ավելացել է «Գլոբալ» հիմնադրամի դրամաշնորհային ծրագիրը: Ընդ որում, ծախսային մասի կանխատեսումները կատարվել են այնպես, որ ընթացիկ տարում բյուջեի լրացուցիչ փոփոխությունների կարիք չլինի: Այսպիսով, 2012 թվականի կանխատեսվող բյուջեն կազմում է շուրջ 1.87 մլրդ դրամ (2011 թվականին կանխատեսվել էր շուրջ 940.0 մլն դրամ, իսկ փաստացին կազմեց մոտավորապես 480.0 մլն դրամ՝ թերի ֆինանսավորման պատճառով):

ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանը նշեց, որ ներկայացված հարցը իրենց կողմից չի ուսումնասիրվել, քանի որ նյութերը բավականին ուշ են ստացվել: Այդ կապակցությամբ առաջարկեց, որպեսզի այսուհետ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգային հարցերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվեն նիստի անցկացումից առնվազն 10 օր առաջ:

ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանն առաջարկեց վերանայել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի բյուջեի կանխատեսումները և արտացոլել իրատեսական ցուցանիշներ (օրինակ՝ հիմք ընդունել 500.0 մլն դրամի շրջանակները):

ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ հոգաբարձուների խորհուրդն իրավազոր է տեղեկանալ ցանկացած փոփոխության: Ուստի, անհրաժեշտ է ընդունել ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանի առաջարկությունը և հետագայում յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի քննարկմանը: Դրանից բացի՝ խիստ կարևորեց սեղմ ժամկետում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հաշվապահի պաշտոնում արհեստավարժ մասնագետի նշանակման հարցը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանին՝

1) ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանի հետ համատեղ քննարկել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի 2012 թվականի բյուջեի նախագիծը և՝

ա. ՀՀ Նախագահի օգնական Ա. Բերբերյանի առաջարկությանը համապատասխան՝ վերանայել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի բյուջեի կանխատեսումները և արտացոլել իրատեսական ցուցանիշներ,

բ. վերջնական տարբերակը ներկայացնել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի քննարկմանը.

2) ընթացիկ տարում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի բյուջեի ցանկացած փոփոխություն ներկայացնել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի քննարկմանը.

3) այսուհետ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգային հարցերը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել նիստի անցկացումից առնվազն 10 օր առաջ:

7. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ներգրավում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 7-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դ. Սարգսյանին՝ համաձայնեցնել Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմում Ա. Կիրակոսյանի փոխարեն ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Զ. Մնացականյանին ներգրավելու հարցը:

8. Հիմնադրամի կողմից հատկացվող դրամաշնորհների կարգերի և աշխատանքային ներքին կարգապահական կանոնների հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 8-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանին ուսումնասիրել կարգերի և աշխատանքային ներքին կարգապահական կանոնների նախագծերը և ըստ այդմ ներկայացնել փորձագիտական եզրակացություն:

9. Հիմնադրամի կողմից կազմակերպվող և աջակցող ծրագրերի մշտադիտարկման և գնահատման կարգի հաստատում

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 9-րդ հարցը զեկուցեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Տեր-Հովակիմյանը:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանին ուսումնասիրել կարգի նախագիծը և ըստ այդմ ներկայացնել փորձագիտական եզրակացություն:

10. Այլ հարցեր

(Ա. Տեր-Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 10-րդ հարցը զեկուցեց ՀՀ ԱԺ պատգամավոր Կ. Ավագյանը և նշեց, որ առաջարկում է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի տնօրինությանը թույլատրել վաճառել 10 տարուց ավելի արտադրության տարեթիվ ունեցող ավտոտրանսպորտային միջոցները՝ այլ ավտոտրանսպորտային միջոցներ գնելու նպատակով:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Կ. Ավագյանի առաջարկը և հիմնադրամի տնօրինությանը թույլատրել վաճառել 10 տարուց ավելի արտադրության տարեթիվ ունեցող ավտոտրանսպորտային միջոցները՝ այլ ավտոտրանսպորտային միջոցներ գնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ԿԱՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՎԱՀԵ ՏԵՐՏԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՄԵՆ ՔԱՐԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԻ ՕԳՆԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍ ԲԵՐԲԵՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ԱՍՏԴԻԿ ՄԻՐՉԱԽԱՆՅԱՆ